Եղիշե Չարենց

Շրթերդ կրակով լիքը օսկեջրած չինի են, ջա՛ն

Շրթերդ կրակով լիքը օսկեջրած չինի են, ջա՛ն,
Խոսքերդ դրախտի խմիչք՝ անմահական գինի են, ջա՛ն:

Էսօր տնում սուփրա ունեմ՝ էշխիցդ քե՛ֆ պիտի անեմ.
Ի՞նչ կըլի որ օթախս գաս ու մե անգամ լինի էն, ջա՛ն:

Փռել եմ խաս խալիչեքը, վրեն ծաղիկ ունեմ շարած՝
Ոտքիդ կարոտ սպասում են շահնշահի, խանի են, ջա՛ն:

Աչքերս թող կրակ ըլին քո սուրբ չրաղվանի համար.
Դափ ու զուռնեն հազրել եմ՝ մտքերդ ի՞նչ բանի են, ջա՛ն:

Կուզես՝ հոգիս ճամփա անեմ, սիրտս դնեմ ոտքերիդ տակ՝
Սրտիցս արյուն է հոսում ինչ որ ուզես կանի էն, ջա՛ն: